



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 9

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2018 Թ. ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի ընտրություն:
2. Ընթացիկ հարցեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի գիտքարտուղար պրոֆ. Ալ. Մակարյանը գիտ-խորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում են 35-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նիստին մասնակցում էին նաև ԵՊՀ պրոռեկտոր պարոն Ա. Կ. Գրիգորյանը և լրագրողներ: Գիտքարտուղարն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

Պրոֆ. Ալ. Մակարյանը տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի պաշտօնափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար նախապես դիմել էին երկու պրոֆեսորներ՝ ֆակուլտետի ներկայիս դեկան Ա. Ավագյանը և հայոց լեզվի ամբիոնի վարիչ պրոֆ. Յու. Ավետիսյանը: Վերջինս, սակայն, այսօր ինքնաբացարկի դիմում է ներկայացրել, և փաստորեն պրոֆ. Ա. Ավագյանը չունի մրցակից:

Այնուհետև առաջարկ եղավ նիստը վարելու համար նախագահող ընտրել պրոֆ. Ս. Մուրադյանին, որի թեկնածությունը միաձայն հաստատվեց բաց քվեարկությամբ:

Պրոֆ. Ս. Մուրադյանը պրոֆ. Յուրի Ավետիսյանի ինքնաբացարկի որոշումը համարեց ողջամիտ քայլ, որն ապացուցում է ֆակուլտետի բոլոր 6 ամբիոնների միասնականությունը: Նա այնուհետև ելույթի համար ձայնը տվեց պրոֆ. Ա. Ավագյանին: Վերջինս իր ելույթում մասնավորապես ասաց հետևյալը.

« - Ամենից առաջ իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում ֆակուլտետի բոլոր ամբիոններին դեկանի պաշտոնում իմ թեկնածության առաջադրման համար:

Հայ բանասիրության ֆակուլտետը մայր բուհի առաջնեկ և հիմնադիր կառույցներից մեկն է և իր գոյության շուրջ հարյուր տարվա ընթացքում կրթել ու կյանք է ճանապարհել հազարավոր շրջանավարտների, որոնց մի մասը գրողներ, գիտության հայտնի մշակներ, պետական ու ազգային գործիչներ են դարձել և իրենց գործունեությամբ նպաստել մեր երկրի, ժողովրդի ու հայագիտության զարգացմանը: Ի դեպ, այսօր գործող գրողների շուրջ 60-70 տոկոսը մեր շրջանավարտներն են): Մեր օրերում էլ ֆակուլտետը արել և անելու է ամեն ինչ տարիներով ստեղծված ավանդույթները շարունակելու համար:

Ինքնին հասկանալի է, որ ֆակուլտետի դեկանի պաշտոնը ստանձնելու դեպքում մեր առաջնահերթ նպատակը պետք է լինի Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի և Կառավարման խորհրդի հաստատած 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների աստիճանական և հիմնավոր իրականացումը, մի բան, որը նպաստելու է ինչպես ողջ համալսարանի, այնպես էլ մեր ֆակուլտետի գիտական ու կրթական առաջընթացին: Վերոհիշյալ ծրագրի հիման վրա ֆակուլտետում ստեղծվել են օրինակելի մի շարք կանոնադրություններ, որոնք ևս ուղենշային պետք է լինեն մեզ համար:

Այսօր ֆակուլտետի վեց ամբիոններում ընթացքի մեջ են ժամանակակից հայոց լեզվին, լեզվաբանությանը, հայոց լեզվի պատմությանը, գրականությանն ու նրա տեսությանը վերաբերող կարևոր ու արդիական գիտական ու կրթական մի շարք ծրագրեր ու հետազոտություններ: Այս առումով պետք է ամեն ջանք ներդրվի այդ աշխատանքների արդյունքները ուսանողությանը ուսանելու և գրքի տեսքով ներկայացնելու համար, որը և պետք է լինի ֆակուլտետի նորընտիր դեկավարի գործունեության նպատակներից մեկը: Նույնքան կա-

րևոր են բուհական դասագրքերի ձեռնարկների ստեղծման աշխատանքները (Ս. Մուրադյանը, օրինակ, այդպիսի դասագիրք է գրում):

Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով նվազել է ֆակուլտետ դիմողների (թե՛ առկա և թե՛ հեռակա) թիվը: Մանավանդ անհանգստացնող է կրթական երկրորդ ու երրորդ աստիճաններ ստանալ ցանկացողների թվի նվազումը: Այստեղ մեծ անելիքներ կան՝ դպրոցների ու կրթական այլ կառույցների հետ կապերի ընդլայնում, հեռուստաթերի և մամուլի օրգանների օգտագործում, դասավանդվող առարկաների և դասախոսական անձնակազմի որակական բարձրացում, ուսանողական կյանքի և նրանց գիտական ուսումնառության արդյունավետ կազմակերպում, մագիստրոսական ծրագրերի խորացում ու մշտական արդիականացում և այլն: Դիմորդների քանակի մեծացմանը կարող է նպաստել նաև ուսանողների և շրջանավարտների նյութական վիճակների բարելավումը՝ կրթաթոշակների բարձրացում, մանկավարժի ու ֆանասերի աշխատավարձերի բարձրացում և այլն:

Մասնագիտական կրթություն տալուց զատ ֆակուլտետի առաջնահերթ խնդիրը եղել ու մնալու է երիտասարդ սերնդի ազգային ու մարդկային նկարագրի ձևավորումը, որտեղ քիչ չեն բարդությունները, որոնց մի մասը գալիս է դպրոցների անհոգ ու աննպատակադիր գործունեությունից, մի մասը՝ առանձին ընտանիքներում տիրող խիստ նյութականացված և ամեն ինչ դրամով չափվող հարաբերություններից, մի մասը՝ հասարակության մեջ տիրող բարոյական ու մտային որակներից, նաև ոչ երկրորդական այլ իրողություններից, որոնցից մեկը, օրինակ, բուհերում թեստային ընդունելության ձևն է, որը չի նպաստում, որ նոր սերունդը իր ձեռքը գիրք վերցնի:

Կրթության որակի բարձրացումը, ըստ մեզ, ամենագլխավոր առաջադրանքն է, որին պետք է ձեռնամուխ լինի ֆակուլտետը: ԵՊՀ-ում իրականացված մի շարք ծրագրեր, անշուշտ, նպաստել են այդ գործին, սակայն դեռ կան անելիքներ: Համալսարանում դասը նպատակների նպատակը պետք է լինի: Մասնագիտական որակների բարձրացման կարիք կա հենց դասախոսական կազմում: Ունենք դասախոսներ, ովքեր լսարան են մտնում հին իմացություններով, անտարբեր են, թե ուսանողը հաճախ^օւմ է դասերին, հանձնարարությունները կատարո^ւմ է, մտահո^գ է իր իմացությունների կատարելագործմամբ, որի արդ-

յունքում ունենում ենք այն, որ կիսամյակային ու տարեկան քննություններում ուսանողների գնահատականների մեծ մասը „8“-եր ու „9“-եր են: Մեր խնդիրը պետք է լինի բարձր առաջադիմություն ունեցողների թիվը մեծացնելը, որը, իհարկե, արհեստական չպետք է լինի:

Շատ բարձր մակարդակով չի անցնում նաև ուսումնական պրակտիկան: Պատճառներից մեկը դպրոցների այսօրվա վիճակն է: Բայց կան նաև այլ խանգարող գործոններ՝ պրակտիկա անցնող ուսանողներ ունենք, որոնք չեն սիրում իրենց մասնագիտությունը, կան ուսանողներ, որոնք ունեն գիտելիքների պակաս և այլն:

Խնդիր է մնում ֆակուլտետի դասախոսների կողմից օտար լեզուների տիրապետման հարցը, որի պատճառով համալսարանական որոշ պայմանագրեր՝ կնքված այլ երկրների բուհերի հետ, մնում են կիսատ: Ցավալին այն է, որ երիտասարդ դասախոսների մեծ մասը ևս չի տիրապետում երկրորդ օտար լեզվի, այդ թվում և ռուսերենի: Անհրաժեշտ է ֆակուլտետում խթանել նաև ուսուցման ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառումը և հեռաուսուցման ձևի ներդրումը: Համացանցի օգտագործմամբ պետք է սերտ փոխհարաբերություններ ստեղծել դասախոս-ուսանող հարաբերություններում՝ դասերի հանձնարարություններ, կոնսուլտացիաներ և այլն: Պետք է մտածել մի քանի նոր առարկաների դասավանդման և ուսուցման մասին, օրինակ՝ «գրավոր խոսք», «գրականագիտական վերլուծություն» և այլն:

Ընդլայնվելու միտումներ են դրսևորում կուրսային աշխատանքների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի արտագրության, ինչպես նաև այլ անձանց և անգամ օֆիսների կողմից գրվող դեպքերը: Մեր ձեռքին է այս իրողությունը հաստատող ևս մի փաստ, ըստ որի՝ պատրաստ են ոչ միայն գրելու, այլև արդեն ունեն պատրաստի գրված նմուշներ:

Ամբիոնները ավելի ուշադիր և հոգատար վերաբերմունք պետք է ցուցաբերեն ասպիրանտների և հայցորդների ընտրության գործում: Պետք է շնորհալի շրջանավարտներին կապել ամբիոնների ոչ միայն կրթական, այլև գիտական աշխատանքների հետ, նպաստել նրանց գիտության ոլորտ ընդգրկվելուն, նրանց հոդվածների տպագրության գործին և այլն: Մեծ անելիքներ ունի ֆակուլտետի ՈւԽ-ը ուսանողների կարգապահական և առաջադիմության ոլորտներում: ՈւԳԸ գործունեությունը վերջին տարիներին մեծ ծավալների է հա-

սել, ֆակուլտետը մրցանակային տեղեր է զբաղեցրել ԵՊՀ-ում: Պետք է է՛լ ավելի սաստարել ուսանողների ընդգրկմանը այդ ոլորտում, նպաստել զեկուցումների քանակի ու որակի բարձրացմանը: Նույնքան և առավել կարևոր է մասնակցությունը ՀՀ գիտական պետական կոմիտեի աշխատանքներին:

Ֆակուլտետն անցած տարիներին կազմակերպել ու մասնակցել է ֆակուլտետային, բուհական, հանրապետական ու միջազգային տասնյակ գիտաժողովների, կոնֆերանսների: Առաջիկայում ևս պետք է ամենաակտիվ գործունեություն ծավալել այդ ասպարեզում, ավելի ակտիվ մասնակցություն ունենալ մանավանդ գիտությունների ազգային ակադեմիայում (լեզվի և գրականության ինստիտուտներ), Մատենադարանում, Միլյուռքի նախարարությունում, գրողների միությունում և կրթական օջախներում կազմակերպվելիք գիտաժողովներին, քննարկումներին: Նույնքան կարևոր է Ղարաբաղի կրթական օջախներում, հանրապետության դպրոցներում, քոլեջներում, զինվորական մասերում իրականացվելիք դասախոսությունների, օլիմպիադաների, «Ամառային դպրոցների», «Բաց դռների օրերի» և այլ միջոցառումների կազմակերպումը: Անցած տարիներում նման միջոցառումների թիվը անցել է հարյուրից:

Առաջիկայում նշվելու է ԵՊՀ-ի հիմնադրման 100-ամյակը: Այն պետք է առիթ դառնա համալսարանը պրոպագանդելու համար, նրա հեղինակությունը բարձրացնելու համար:

Ընդամենը մի քանի օր առաջ ֆակուլտետում բացվեց Սայաթ-Նովայի անվան լսարանը: Նախատեսվում է ամռան ամիսներին վերանորոգել և կահավորել պրոֆեսորներ Մանվել Ասատրյանի և Ալբերտ Շարուրյանի անվան լսարանները, մասնաշենքի առաջին հարկում տեղադրել պրոֆեսորներ Մկրտիչ Մկրյանի և Հովհաննես Բարսեղյանի կիսանդրիները, ռեկտորատը ծրագիր ունի մեր մասնաշենքի բակում տեղադրել Լևոն Ներսիսյանի նկարագիրը խորհրդանշող կոմպոզիցիա, իսկ Հովհ. Թումանյանի և Գրիգոր Նարեկացու լսարանների կահավորման գործը ընթացքի մեջ է:

Ֆակուլտետի առաջիկա ջանքերից պետք է լինի հովանավոր անձանց կամ կազմակերպությունների հետ կապերի ստեղծումը: Ցավոք, հայագիտությունը քչերին է հետաքրքրում, իսկ առանձին դեպքերում՝ բոլորովին չի հետաքրքրում: Նույնը արտասահմանյան բարերարների առումով: Բայց սա չի նշանակում, որ առհասարակ բարերարներ չկան:

Պարզապես համառություն է պետք ցուցաբերել նման մարդկանց գտնելու համար: Լուծումներից մեկն էլ կարող է մասնագիտական ծառայություններ մատուցելը լինել:

Ֆակուլտետի գիտական ներուժի տեսանկյունից կարևոր է դասախոսների գիտական աստիճանների բարձրացման խնդիրը: Մակայն մեր մի շարք ունակ դասախոսներ չեն ձեռնարկում դոկտորական աշխատանքներ գրելուն: Որոշ պատճառներ, իհարկե, կան՝ վճարվող հավելավճարի ցածր լինելը, օրինակ: Մակայն կարծում ենք, որ մասնագետը պարտավոր է ամեն օր աշխատել իր մասնագիտական որակների բարձրացման ուղղությամբ: Վերջին տարիներին մի շարք պատճառներով իջել է դասախոսների հեղինակությունը, որը ոչ մի կերպ չի կարող նպաստել համալսարանի հեղինակության բարձրացմանը: Անհրաժեշտ է անել ամեն ինչ՝ դասախոսի ընկած հեղինակությունը բարձրացնելու համար, նրա անձի նկատմամբ ուսանողների մեջ հարգանք սերմանել, քանի որ առանց այդ հեղինակության բարձրացման ոչինչի հնարավոր չէ հասնել: Անելիքներ, իհարկե, կան և կարող են շատ լինել: Կարծում ենք՝ այդ ամենը հնարավոր է իրականություն դարձնել, եթե ֆակուլտետում տիրի աշխատանքային և բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, որին և պիտի ձգտենք բոլորս:

Շնորհակալություն»:

Պրոֆ. Ա. Ավագյանի ելույթից հետո ելույթ ունեցողները՝ պրոֆ. Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Հայրապետյանը, ուսանողներ Ա. Պողոսյանը, Հովհ. Հովակիմյանը, Վ. Ամիրջանյանը և այլք, անդրադարձան ֆակուլտետում երիտասարդ կադրերի ներգրավման կարևոր խնդրին, ուսումնական պրակտիկաները ավելի արդյունավետ կազմակերպելու, դասախոսների ծանրաբեռնվածության, ինչպես նաև դասախոսների դասավանդման մեթոդիկայի փոփոխության և դասախոսների աշխատավարձերի բարձրացման հարցերին:

Վերջում ԵՊՀ պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը, հանգամանալից անդրադառնալով վերոնշյալ հարցերին, ներկայացրեց ԵՊՀ ղեկավարության դիրքորոշումը:

Փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Հայրապետյան Աշոտ – նախագահ

2. Ռուբիկ էլոյան

3. Հովհաննես Հովակիմյան

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո նախագահ Ա. Հայրապետյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 36 անդամներից նիստին ներկա են եղել 35-ը, և քվեարկությանը մասնակցել են 35-ը:

Բաժանվել է 35 քվեաթերթիկ:

Քվեատուփում հայտնվել է 35 քվեաթերթիկ:

Քվեարկությունն ունեցավ հետևյալ արդյունքները՝

կողմ – 32

դեմ – 0

անվավեր – 3

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Ելնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքներից՝ **Արծրուն Արզարի Ավագյանին** ընտրված համարել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

Գիտական խորհրդի նիստի վերջում նախագահող պրոֆ. Ս. Մուրադյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին, և նիստը հայտարարվեց փակված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ